

ասոնք տաճկերէնի մէջ հայերէն բառեր խառնելով յառաջ կտանին մայրենի լեզուն: Ասոնք կարող են *Մշակի* մէջ հայերէն յօդուածներ գրել:

Այս թաղն առողջ օդ մ'ունի. եւ եթէ թաղեցին գէշ օդի մը մէջ աշխարհ գալու ստիպուէր՝ մեռած պիտի ծնէր:

Զ.

ԷՅՈՒՒՊ

Էյուպի մէջ երկու սուրբ կայ, որ իրարմէ կէս ժամու չափ հեռաւորութիւն ունին: Այս սուրբերէն միոյն անունն է Աստուածածին եւ միւսինը Եղիա: Այսօր Ս. Եղիայի Էյուպի վրայ պիտի խօսինք:

Այս թաղին մէջ բնաւ սատանայ չկայ, գրեթէ մեծ մասամբ աղանիի պէս միամիտ են: Ժողովուրդը պահպանողական ըլլալով՝ քայլ մը յառաջ գնացած չէ այն վիճակէն, որուն մէջ ստեղծած է զինքն Աստուած: Այս թաղին մէջ պտըտողը ինքզինքն Ադամայ ժամանակակից կը կարծէ:

Հարիւր տասը հայ տուն կայ հոս: Ժամանակաւ երկու վարժարան ունէին, մին աղջիկներու եւ միւսը մանչերու. իսկ հիմա այդ շէնքերն այրած ըլլալով՝ աշակերտներու մէկ մասը տան մը մէջ կը խաղան եւ մէկ մասն ալ փողոցներու մէջ: Աշխատող պզտիկ մաս մը կայ, որ հանգանակութեամբ վերաշինել կաշխատի թաղին վարժարանները:

Ժողովուրդն իւր զաւակներուն դաստիարակութեանը համար սիրտ չհատցունէր. եթէ Աստուած կամենայ, կըսէ, մեր զաւակներն առանց վարժարան երթալու ալ կրնան ուսումնական ըլլալ:

Հոս ո՛չ ընկերականութիւն կայ եւ ո՛չ երիտասարդութիւն, այլ առանձնասիրութիւն եւ տղայութիւն կայ. ամեն մարդ պարտաւոր է իւր տունը քաշուիլ ու նստիլ. մեծ անիրաւութիւն է դրացւոյն տունն երթալ եւ մէկ երկու ժամ նստելով ժամանակ անցունելը:

Այս թաղին մէջ արհեստն ալ իւր օրօրոցին մէջ է դեռ: Էյուպի ազգայիններուն մէկ մասը բրուտ ըլլալով՝ հողէ տեսակօտեսակ ամաններ եւ անօթներ կը շինեն: Հողէ տեսակ մ'ալ անօթ կը շինեն, որուն հայերէնը չենք յիշեր, բայց մեր ընթերցողներուն կատարեալ գաղափար մը տալու համար յիշեալ անօթին վրայ՝ կը պարտաւորինք ըսել, թէ շատ մը կիներ հիմայ ճիշտ այդ հողէ անօթը յարդէ շինելով՝ վրան լաթ մը կ'անցունեն եւ քիչ մը ծաղիկով եւ *քօրտէլայով* զարդարելէն ետքը իրենց զուխը կ'անցունեն: